

## ՆԵՍՏՈՐԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պատմական գիտութումների թեկնածու, դոցենտ

19-20-րդ դարերը աստվածաբանական ու եկեղեցագիտական գրականության մեջ իրավամբ կարելի է համարել քրիստոսաբանական վիճաբանությունների «սպիտակ էջերի» վեր հանճան և նորովի արժևորման ժամանակաշրջան։ Թվում էր, թե քրիստոսաբանական վիճաբանությունների հիմնահարցն այդպես էլ մնացել էր միջնադարում, սակայն նոր հայտնաբերված վավերագրերը, փաստաթղթերը և նախկինում անհայտ գրականությունը (կամ դրանց առանձին պատահիկներ) գալիս են վկայելու, որ բավականին վաղ է շրջել քրիստոսաբանության պատմության էջերը, իսկ որ առավել կարևոր է, պատմականորեն արդարացված չէ առաջնորդվել այն նույն արժեհամակարգային սկզբունքներով, որոնք արխայիկացվելով դեռևս միջնադարում, բազմաթիվ դեպքերում ժամանակաշրջանի հոգևոր կյանքի իրական կարիքներն ու հոգսերը չեն արտահայտում։

Հօռմեական կայսրության շարունակական տրոհումների ու բաժանումների արդյունքում արևմուտքի և արևելքի քրիստոնեական եկեղեցիների գործառությունը շարունակվեց հասարակական-քաղաքական և աստվածաբանական տարբեր միջավայրերում։ Վաղուց ձևավորված ավանդության համաձայն աստվածաբանական հիմնական վիճաբանություններն ու քննարկումները ծավալվում էին քրիստոնեական արևելքում, իսկ արևմուտքն այդ ընթացքում առավել ամրապնդում էր պապական իշխանության հիմքերը և դնում էր պապակենտրոն Հօռմի հիմքերը։ Եվ այն ժամանակ, երբ Արևմտյան եկեղեցին գրադարձ էր նախամեղքի, շնորհի և ընտրյալություն վարդապետությունների մշակմամբ, արևելքում սկիզբ էր առնում մի նոր աստվածաբանական ներհակություն, որին պետք է հետագայում անվանեին «քրիստոսաբանական մեծ վեճ»։ Քրիստոնեության առաջին՝ Նիկեայի 325 թ., Կոստանդնուպոլիսի 381 թ., Եփեսոսի 431 թ. և Բաղկեդոնի 451 թ. տիեզերաժողովները միջնորդավորված կամ ուղղակի գրադվել են նաև քրիստոսաբանական հիմնահարցերի քննարկումներով։

Քրիստոսաբանական այդ վիճաբանություններն ընթանում էին հին աշխարհի երկու հայտնի աստվածաբանական կենտրոնների՝ Ալեքսանդրիայի և Անտիոքի կողմից նախանշված ուղենիշների ներքո։ Ալեքսանդրիայի և Անտիոքի աստվածաբանական ըմբռնումների անհաշտ ներհակության այդ փուլում աստիճանաբար ամրապնդվում էր կայսերական եկեղեցու համարում ունեցող Կոստանդնուպոլիսի պատրիարքությունը։ Պատմական այս փուլում է նաև, որ եկեղեցու շրջանակներում աստիճանաբար ձևավորվում էին, այսպես կոչված, «երլյակ համագործակցություններ», մի կողմից՝ ի դեմս Հօռմի և Ալեքսանդրիայի, իսկ մյուս կողմից՝ Կոստանդնուպոլիսի և Անտիոքի։ Հօռմի և Ալեքսանդրիայի դաշինքն աստվածաբանականից զատ երեմն նաև քաղաքական երանգավորում էր ստանում, քանի որ ուղղված էր բյուզանդական կայսերի հովանավորչության ներք հանդես եկող կ. Պոլսի պատրիարքների դեմ։ Գրիգոր Աստվածաբանի և Հովհան-

Ոսկեբերանի պատմությունը կանոնական այդ թշնամանքի լավագույն վկայություններից է<sup>1</sup>:

Յովհան Ոսկեբերանի նման գահընկեց արված և բանադրված Կ. Պոլսի պատրիարք Նեստորի կյանքի մասին բավականին քիչ տեղեկություններ են հասել մեզ: Թերևս հայտնի է, որ նա ծնունդով Գերմանիկի կոչվող վայրից էր (ներկայիս Մարաշի տարածքը)<sup>2</sup>, որը Ենթարկվում էր Անտիոքի պատրիարքությանը: Անտիոք քաղաքում էլ նա ստացել է իր կորությունը և դարձել Եվայրեափիոս վանքի վանական: Այստեղ Նեստորն աչքի է ընկել ասկետիկ կյանք վարելու նախանձախնդրությանը և քարոզխոսական ունակություններով: Նեստորի մասին համեմատաբար ամբողջական տեղեկություններ են պահպանվել 428-431 թթ. նրա գործունեության մասին, երբ նա դարձել է Կ. Պոլսի պատրիարք: Կ. Պոլսի Աստիկոս պատրիարքի մահվանից հետո (425 թ.) մայրաքաղաքի նվիրապետական արորին հավակնել են Երկու թեկնածուներ՝ Աստիկոսի քարտուղար Պրոկլը<sup>3</sup> և գիտական մեծ համբավ ունեցող Ֆիլիպը<sup>4</sup>: Այս Երկուսի միջև ծագած հակասությունների հետևանքով նվիրապետ ընտրվեց «կոմպրոմիսային թեկնածու» Սիսինիոսը, որը, սակայն, ընտրությունից Երկու տարի անց մահացավ: Թշնամական խմբավորումների միջև սառած հակամարտությունը չվերակենդանացնելու նպատակով Թեոդոս Բ կայսրը որոշեց նոր պատրիարք ընտրել Կ. Պոլսի հոգևորականության շարքերից դուրս գտնվող մարդու և նրա ընտրությունը կանգ առաջ արդեն վանահայր դարձած Նեստորի վրա: Կ. Պոլիս ուղևորվելու ճամապարհին, ըստ տեղեկությունների, նա այցելում է իր կյանքի մայրամուտն ապրող Թեոդորոս Մոպսուեստացուն, որն էլ նրան խորհուրդ է տալիս «կտրուկ և չոր կերպով չիակաղուվել ուրիշների կարծիքներին»՝ վստահ լինելով, որ այդ հակվածությունը «մի օր դժբախտություն կրերի Նեստորին»<sup>5</sup>:

Իր գահակալման արարողության ժամանակ կոչով դիմելով Թեոդոս Բ-ին,

<sup>1</sup> Յովհան Ոսկեբերանը Կ. Պոլսի պատրիարք է դարձել 398 թ. Ալեքսանդրայի պատրիարք Թեոփիլոսի կամքին հակառակ: Ոսկեբերանը դատապարտել է Թեոփիլոսի գործունեությունը, որի հետևանքով քաղաքիվ վանականներ հարկադրված են եղել ապաստան գտնել Կ. Պոլսում: Տե՛ս *Сократ Схоластик*. Ըերկանական պատմություն, մ. 1994, հ. VI, ըլ. 9: Տե՛ս նաև *Zenos A. C.* The Ecclesiastical History of Socrates Scholasticus. Ser. 2, Vol. II (of N.P.N.F., ed. by P.Schaff and H. Wace). New York, 1890: Կայսրուհի Եվղոρիայի օգնությամբ Թեոփիլոսին հաջողվել է 40 եպիսկոպոսների մասնակցությամբ ժողով գումարել Օակում, որտեղ էլ Ոսկեբերանը զարդարել է հոչակել: Այս մասին տե՛ս *Hefele C. J.* A History of the Councils of the Church (trans. by H.N. Oxenham). Edinburgh, 1896, vol. II, sec. 115; *Jackson F. J. F.* The History of the Christian Church to A.D. 461. London (6th ed.), 1914, p. 447 ff.

<sup>2</sup> Տե՛ս *Сократ Схоластик*. Ըերկանական պատմություն, հ. VII, ըլ. 29: Յարկ է օշել նաև, որ ասորական աղբյուրերը համառորեն փորձում են Նեստորին պարսկական ծագում վերագրել: Անենայն հավանականությամբ այդ հանգամանքը պետք է բացատրել Պարսկաստանում նեստորական-ասորիների տարածումով և մինչև մեր օրերը գոյատևմամբ:

<sup>3</sup> Տե՛ս *Сократ Схоластик*. Ըերկանական պատմություն, հ. VII, ըլ. 41:

<sup>4</sup> Ըստ տեղեկությունների՝ նրա գրքին է պատկանում «Եկեղեցու պատմություն» աշխատությունը, որը, ցավոք, մեզ չի հասել: Այդ մասին տե՛ս *Duchesne M. L.* The Early History of the Christian Church (trans. by C. Jenkins). Vol. II, London, 1922, p. viii, n. 1:

<sup>5</sup> *Nestorius*: Le Livre d'Heraclide de Damas (by P. Bedjan). Leipzig and Paris, 1910, p. lii.

Նեստորն ասել է. «Օ կայսր, տուր ինձ հերետիկոսներից մաքուր երկիր և դրա փոխարեն ես քեզ կտամ երկինքը, օգնիր ինձ հաղթելու հերետիկոսներին և ես կօգնեմ քեզ հաղթելու պարսիկներին»<sup>6</sup> և աբովն ստանձնելու հենց հաջորդ օրն անհաշտ պայքար է սկսել հերետիկոսությունների դեմ: Նեստորի ակտիվ միջամտությամբ նրա օծումից հինգ օր անց քաղաքային ոստիկանությունը փակել է Կ. Պոլսում գործող արիոսական տաճարը<sup>7</sup>, որին հաջորդեցին հետապնդումները նովառտիկանների<sup>8</sup>, մակեդոնականների<sup>9</sup> և այլոց դեմ: Ընդ որում, տեղեկություններ են պահպանվել այն մասին, որ մակեդոնականների տաճարի փակումից հետո նրանց գոյությունը դադարել է և դրանով վերջ է տրվել մակեդոնական պառակտմանը: Հետաքրքրական է, թե ինչ ի նկատի ուներ Նեստորը, երբ Թեոդոս II կայսեր ներկայությամբ արտասանում էր այս հայտնի խոսքերը: Արդյո՞ք նա ի նկատի չուներ Պարսկաստանի քրիստոնեականացումը, որով Բյուզանդիայի հակառակորդը կվերածվեր նրա համախոհի կամ անգամ՝ ենթակա երկիր, քանի որ կգործեր միևնույն արժեհամակարգային դաշտում: Դժվար է պատկերացնել, որ վանքից նոր դուրս եկած վանականը կկարողանար կայսրին որևէ այլ աջակցություն ցուցաբերել, քան բարոյահոգեբանականը: Եվ քանի որ կայսրերին առավել պրագմատիկ քայլերն ին հետաքրքրում և հաշվի առնելով այն, որ Թեոդոս II կայսրը փաստորեն իրագործել էր իրենից սպասվածն ու պայքար սկսել հերետիկոսների դեմ, ապա ենթադրաբար պատրիարքն էլ, իր հերթին, պետք է կոնկրետ քայլեր կատարեր: Եվ եթե հաշվի առնենք, որ նեստորականները տարածվեցին ու պահպանվեցին հենց Պարսկաստանում, ապա կարելի է ենթադրել, որ պատրիարքն էլ կատարեց իր խոստումը, սակայն հանգամանքների բերումով նա չկարողացավ մինչև վերջ իրագործել իր ծրագիրը:

Կավերագրերը վկայում են, որ չնայած նրան, որ Նեստորը հայտնի էր իրեն «համեստ ու առաքինի վանական», հերետիկոսների դեմ պայքարում, սակայն, նա դարձել է ծայրաստիճան դաժան ու անզիջում: Վերլուծաբաններից շատերը, մատնանշելով այդ փաստը, պնդում են, որ Նեստորի կենսագրության թերևս ամենադրամատիկ պահը նրանում էր, որ ողջ կյանքը պայքարելով հերետիկոսների դեմ, կյանքի վերջում նա ինքն արժանացավ հերետիկոսների ճակատագրին:

Այս ամենով հանդերձ պետք է նկատել, որ Նեստորի համար շրջադարձային եղավ ոչ թե իր նախաձեռնած պայքարը հերետիկոսների դեմ, այլ իր հետ Անտիոքից Կոստանդնուպոլիս եկած Անաստասիոս քահանայի կողմից քարոզի ժա-

<sup>6</sup> Տե՛ս *Сократ Схоластик*. Վերկօնայ ստորայ, κη. VII, ց. 29: Յնարավոր է, որ եկեղեցական պատմիչի կողմից մեջբերվող խոսքերը չափազանցեցված են, սակայն դրանք բավականին օրյեկտիվ կերպով արտացոլում են տվյալ ժամանակաշրջանի պահանջներն ու կարգները:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>8</sup> Նովառտիկաննությունը Ղեկոս կայսեր հալածանքների օրոք (249-250թթ.) ձևավորված դիսցիպլինար պառակտում էր:

<sup>9</sup> Մակեդոնականները (հոգեմարտները) Կ. Պոլսի Մակեդոն պատրիարքի հետևորդներն էին, որոնք ընդունում էին Յայր և Որդի Աստծու համագոյությունը, սակայն մերժում էին Ս. Յոհան հանագոյությունը: Մակեդոնականները դատապարտվեցին Կ. Պոլսի 381 թ. տիեզերաժողովի կողմից:

մանակ կույս Մարիամի նկատմամբ «Theotokos» (Աստվածածին) եզրի այլաբանական մեկնությունը: Այս քարոզը բավականին մեծ իրարանցման ու հիասքափությունների տեղիք տվեց, քանի որ Անաստասիոսը, իբրև գաղափարակիր, աջակցություն գտավ Նեստորի կողմից: Այդպես սկիզբ դրվեց նեստորական վիճարանություններին<sup>10</sup>:

Մարիամի Աստվածածին կամ մարդածին լինելու վերաբերյալ Նեստորը ստիպված եղավ իր մոտեցումները պարզաբանել 428 թ. Ա. Ծննդյան օրը: Քարոզի ժամանակ նա հայտարարեց. «Ո՞չ: Մարիամն Աստծու մայրը չէ: Մարմնից ծնվածը մարմնական է, իսկ Հոգուց ծնվածը՝ Հոգի»<sup>11</sup>: Այս խոսքերից հետո նրա դեմ ընդդիմացան Եվսեբիոսը, ով հետագայում դարձավ Դորիլեայի եպիսկոպոսը (448-451թ.) և Պրոկլը, ով հետագայում դարձավ Կոստանդնուպոլսի պատրիարք: Եվսեբիոս Դորիլեացին հռչակում էր, որ Հավիտենական Բանը ծնվել է մարմնով և համոզված պնդում էր, որ Նեստորը դարձել է Պողոս Սամոսացու հերետիկոսական հայացքների գոհը<sup>12</sup>: Իր հերթին Պրոկլը ելույթ ունենալով մայրադարձային բնակչության առջև, հայտարարեց, որ «Սովորական մարդը փրկել չի կարող, իսկ Աստված տառապել չի կարող» և աստվածաբանի այս խոսքերը բավականին բուռն ընդունելության արժանացավ ունկնդիրների շրջանում<sup>13</sup>: Այս հարձակումներին Նեստորը ստիպված էր պատասխանել: Եվ Զատկին հաջորդող օրերին նա հանդես եկավ երեք հրապարակային քարոզներով, որպեսզի ինչոր կերպ կարողանա մեղմել մայրաբադքում օրավոր աճող ընդդիմությունը: Ժխտելով Պրոկլի տեսակետը Մարիամի Աստծու մայր լինելու վերաբերյալ՝ Նեստորն իր ելույթներում նշում էր, որ «Աստված անցել է Կույսի միջով և որ Սուլը Գրքերում նշված չէ, թե Աստված նրանից է»<sup>14</sup>: Առավել զարգացնելով իր մոտեցումը՝ Նեստորը վկայակոչում էր աստվածաշնչական այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են «Երեխան և նրա մայրը», «Աստված և նրա մայրը» և այդ իհման վրա ընդհանրացնելով պնդում էր, թե այդ արտահայտությունները վերագրելի են միայն Յիսուսին և ոչ մի պարագայում՝ Քրիստոս Աստծուն<sup>15</sup>:

Փաստորեն այդ ամենով Նեստորն առաջին անգամ բացահայտ կերպով հանրությանը ներկայացրեց իր քրիստոսաբանական գաղափարները և արձագանքներն էլ իրենց երկար սպասեցնել չտվեցին: Լուրերը բավականին արագ հասան նաև Ալեքսանդրիա, որտեղ Կյուրեղ պատրիարքը հարմար արիթի էր սպասում Կ. Պոլսի աթոռի նկատմամբ իր դժգոհություններն ի ցույց դնելու համար: Խոսքը վերաբերում է Նեստորի կողմից Կյուրեղի վտարած վանականներին Կ. Պոլսում ապաստան տալուն, ինչը չէր կարող աննկատ մնալ Ալեքսանդրիայի կողմից: Եվ

<sup>10</sup> Տե՛ս **BethuneBaker J. F.** An Introduction to the Early History of Christian Doctrine. London, 1962, p. 261:

<sup>11</sup> **Loofs F.** Nestorian: Die Fragmente des Nestorius gesammelt, untersucht und herausgegeben. Halle, 1905, p. 252f.

<sup>12</sup> Տե՛ս **Kidd B. J.** A History of the Church to A.D. 461. Vol. III, Oxford, 1922, p. 202.

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 203-204:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 205: Տե՛ս նաև **Loofs F.** Nestorian: Die Fragmente des Nestorius gesammelt, untersucht und herausgegeben, p. 267-278.

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղում:

Նեստորի Ելույթից շատ չանցած՝ 429 թ. Կյուրեղը գրում է Նիտրիայի վաճական-ներին ուղղված նշանավոր «Ad monachos Aegypti»<sup>16</sup> ուղերձը, որտեղ մատնանշում է. «Մարիամն Աստծու մայրն է»: Հասկանալի է, որ այս ուղերձի իրական հասցեատերն անտիօքյան քրիստոսաբանական ավանդության կրող Նեստորն էր և ոչ թե եգիպտական վանականները: Ուղերձում Կյուրեղ պատրիարքը հղում է անում ոչ թե առաջալներին, այլ Եկեղեցու Յայրերին, մասնավորապես Աթա-նասին և նիկեական հանգանակի նրա մեկնությանը<sup>17</sup>: Իրականում իր այս ուղերձով Կյուրեղը ցանկանում էր դրդել Նեստորին, որպեսզի նա առաջինն սկսի հար-ձակումն իր նկատմամբ: Կյուրեղի քաղաքական պլանները ծիշտ դուրս եկան, քանի որ Նեստորը, վիրավորված լինելով իր պատրիարքության ներքին գործերին միջամտելուց, հանդես է գալիս Կյուրեղի դեմ և իր քահանաներից Փոտին հանձնարարում է պատասխանել Կյուրեղի նամակին: Ստանալով Նեստորի նա-մակը՝ Կյուրեղ Ալեքսանդրացին 429 թ. հունիսին Նեստորին է ուղարկում իր առաջին նամակը (Advenenerunt): Նրանում Կյուրեղն անհանգստություն է հայտ-նում Կոստանդնուպոլսում տիրող խառնակ վիճակի համար, Նեստորին մեղադ-րում իրենց հարաբերությունների վատքարացման համար և պահանջում նրա-նից Մարիամին անվանել Աստվածածին (Theotokos): «Եթե դու ընդունես ընդա-մենը մեկ՝ Աստվածածին քառը,- հորդորում է Կյուրեղ Ալեքսանդրացին,- դու մի-անգամից կվերականգնես ուղղափառության նկատմամբ քո հեղինակությունը և միևնույն ժամանակ կվերականգնես խաղաղությունը Եկեղեցու ներսում»<sup>18</sup>: Այս-տեղ, իհարկե, մեծ իմաստով թակարդ էր նախատեսված Նեստորի համար, քա-նի որ եթե նա միանգամից հրաժարվեր իր նախկին հայացքներից, ապա ոչ մի-այն չեր վերականգնի իր հեղինակությունը, այլ կողոքներ անտիօքյան ազակից-ներին և մնացյալ համախոհներին: Միևնույն ժամանակ, այդ պարագայում Կյու-րեղն առավել մեծ հեղինակության կարժանանար մայրաքաղաքում: Քաջ գի-տակցելով այդ ամենը՝ Նեստորը մերժողական պատասխան է ուղարկում Կյու-րեղին:

Միաժամանակ պետք է նշել նաև, որ Նեստորի հարաբերությունները հարթ չե-ին նաև Յոռմի պապական կենտրոնի հետ, քանի որ Նեստորը Կ. Պոլսում ապաս-տան էր տվել Կելեստինոս պապի կողմից Յոռմից Վտարված պելագիականներին: Այդ անհեռատես քայլը չեր կարող աննկատ մնալ արևմտյան Եկեղեցու կողմից: Եվ հարաբերությունների սրումն ուղղադավանության պաշտպանների համա-րում ունեցող Ալեքսանդրիայի և Յոռմի հետ հանգեցրեց այն բանին, որ Բյուզան-դիայի մայրաքաղաքում մեծ թվով հոգևորականներ բացահայտ կերպով հանդես եկան Նեստորի քրիստոսաբանական հայացքների դեմ<sup>20</sup>:

Տեղեկանալով դեպքերի անցանկալի ընթացքի մասին՝ 430 թ. փետրվարին Կյուրեղ Ալեքսանդրացին գրում է Նեստորին հղված երկրորդ նամակը

<sup>16</sup> Մանրամասները տես *Cyril Ep.*, I, Patrologia Graeca (ed. by J.P. Migne). T. LXXVII, Paris 1866, 9-39.

<sup>17</sup> Տես *Kidd B. J. A History of the Church to A.D. 461*, vol. III, p. 210.

<sup>18</sup> Տես *Cyril, Ep.*, II, (ed. by J.-P. Migne). T. LXXVII, p. 39-42.

<sup>19</sup> Տույն տեղում:

<sup>20</sup> Տես *Kidd B. J. A History of the Church to A.D. 461*, vol. III, p. 212.

(Oblogosuntur), որտեղ շեշտը դնում է առավելապես դոգմատիկական հարցերի վրա<sup>21</sup>: Այս տեսանկյունից անհնար է չնկատել, որ փայլուն դիվանագետ լինելով՝ Կյուրեղը քաջ գիտակցում էր, որ դոգմատիկական հարթության մեջ հարցի դիտարկումն ամենաարդյունավետ միջոցն է երերացող Նեստորին տապալելու համար: Միաժամանակ Կյուրեղը նամակով դիմեց Հռոմի Կելեստինոս պապին՝ չմոռանալով նշել, որ Եկեղեցական ավանդության համաձայն Եկեղեցուն վերաբերող բոլոր կարևորագույն հարցերը պետք է ներկայացվեն Հռոմի աթոռի դատին: Նմանատիպ դիվանագիտական քայլով Կյուրեղը խորացնում էր պապական կենտրոնի դժգոհությունները Նեստորի նկատմամբ և միևնույն ժամանակ խնդրում էր պապին խնդրո առարկա հարցի լուծման համար ընդհանրական դատավորի դեր ստանձնել: Վիճաբանական խնդրին առավել խորը ծանոթացնելու նպատակով Կյուրեղը պապին է ուղարկում փաստաթղթեր, «Նեստորի աստվածամերժության դեմ» ուղղված իր հինգ գրքերը, Նեստորի ուղղված երկու նամակները, ինչպես նաև մի շարք քարոզներ, որոնց միջոցով փորձ էր կատարում պապին առավել խորությամբ ծանոթացնել Նեստորի գաղափարների հետ:

Իր հերթին Նեստորը ևս 429 թ. զատկական տոների ժամանակ Կելեստինոս պապին է ուղարկում իր առաջին նամակը (Ad Caelestium I), որտեղ տեղեկություններ էր խնդրում Կ. Պոլսում բնակվող պելագիականների մասին և հավաստիացնում էր, որ նրանց «Եկեղեց ուսուցումներից» հնքը ևս լուրջ վնասներ է կրել: Հակամարտող կողմերի՝ պապին դիմելու շնորհիվ, Հռոմի պապական կենտրոնը, ինչպես շատ անգամներ պատմության ընթացքում, իր կամքից անկախ երրորդական դատավորի կեցվածք ընդունեց, ինչը հետագայում մեծապես նպաստեց պապերի բացարձակ հեգեմոն դերի մասին ուսմունքի արմատավորմանը: Միևնույն ժամանակ գաղտնիք չէ նաև, որ արևմտյան աշխարհին հասու չէին արևելքի խոր փիլիփայական-դոգմատիկական հայեցակարգերը, որի պատճռով էլ պապի խնդրանքով լատիններենի և հունարենի գիտակ Հովհաննես Կասիանին, հանգամանորեն ուսումնասիրելով Նեստորի գրվածքները, իր կարծիքը հայտնեց յոթհատորանոց «De incarnatione Domini contra Nestorianos» աշխատության մեջ<sup>22</sup>: Այդ ընթացքում Նեստորը Հռոմ ուղարկեց նաև իր երկրորդ (Ad Caelestium II)<sup>23</sup> և երրորդ (Ad Caelestium III)<sup>24</sup> նամակները, որոնց պատասխաններն այդպես էլ նա չստացավ:

Խնդրին առավել ամբողջական և համակարգված լուծում տալու նպատակով Կելեստինոս պապը 430 թ. օգոստոսին Հռոմում ժողով է հրավիրում, որը, հաշվի առնելով վերը թվարկված փաստաթղթերը, որոշում է իրեն հերետիկոսի դատապարտել Նեստորին: Միևնույն ժամանակ Նեստորին հղված պապական ուղեր-

<sup>21</sup> Այդ նպատակով Կյուրեղը գրեց իր հայտնի «Epistola Dogmatica» աշխատությունը: Վերջինիս ամբողջական տեքստը տես *Patrologia Graeca* (ed. by J.-P. Migne). T. LXXVII, col. 44-50: *St. in Nicaea Stevenson J.* Creeds Councils and Controversies. London, 1966, p. 276-279.

<sup>22</sup> Տեքստի անգլերեն թարգմանությունը տես *Roberts A. The Seven Books of John Cassian on the Incarnation of the Lord, Against Nestorius. A Select Library of Nicene and Post-Nicene Fathers* (ed. by P. Schaff and H. Wace). Ser. 2, (1894). Vol XI, New York, 1890-1900. p. 551-621.

<sup>23</sup> Տես *Loofs F. Nestoriana: Die Fragmente des Nestorius gesammelt, untersucht und her-ausgegeben*, p. 169ff.

<sup>24</sup> Տես նույն տեղում, էջ 181f:

ձում նշվում էր, որ եթե նա, նամակները ստանալուց հետո, տասն օրվա ընթացքում չիրաժարվի իր հայացքներից, ապա կիամարվի նաև եկեղեցական հաղորդությունից զրկված (Aliquantis diebus)<sup>25</sup>: Ժողովից հետո Կելեստինոս պապը տասնմեկ նամակներ է հղում քրիստոնեական տարբեր կենտրոնների նվիրապետներին, այդ թվում նաև Կյուրեղին, Նեստորին ու Յովիաննես Անտիոքացուն՝ տեղեկացնելով ժողովի արդյունքների մասին<sup>26</sup>: Հետաքրքրական է, որ պապը նամակ չի ուղարկում կայսերական կենտրոն, դրանով, հավանաբար, փորձելով ցույց տալ իր բացառիկ հեղինակությունը և հեգեմոն դիրքը քրիստոնեական աշխարհում:

Ժողովի որոշումները ստանալուց հետո Նեստորն իր անհամաձայնությունն է հայտնում դրանց նկատմամբ և աջակցության համար դիմում է իր հովանավոր Թեոփոս Բ կայսրին: Ղեպերի նման ընթացքը կանխազգալով՝ Կյուրեղով մինչ այդ արդեն մի քանի նամակներ էր հղել կայսերը, կայսրուիհի Եվդոքսիային և կայսեր քրոջը՝ Պուլխերիային<sup>27</sup>: Սակայն կայսրը, Նեստորի խնդրանքով, արդեն տվել էր իր համաձայնությունը հարցը քննարկելու նոր տիեզերաժողովում, որը պետք է գումարվեր 431 թ. հունիսի 7-ին Եփեսոս քաղաքում: Տիեզերաժողովը հրավիրելով կայսրը նպատակ ուներ լուծում տալ խնդրո առարկա հիմնահարցին և կայսրությունը զերծ պահել անցանկալի եկեղեցական պառակտումներից: Իր հերթին Նեստորը հույս ուներ կայսեր օժանդակությամբ տիեզերաժողովի ընթացքում վերահաստատել իր սկզբունքները և հիմնավորել իր ճշմարտացիությունը:

Այդ պայմաններում դիվանագիտական բավականին հետաքրքիր հերթական քայլն է կատարում Կյուրեղ Ալեքսանդրացին: 430 թ. նոյեմբերին նա «ի կատարումն պապի հրահանգների» Ալեքսանդրիայում հրավիրում է տեղական ժողով, որը երկրորդեց Յոռմի որոշումները: Միևնույն ժամանակ Կյուրեղը պապական նամակին (Epistola Synodica)<sup>28</sup> կցելով իր հայտնի 12 նգովքները<sup>29</sup>, ուղարկեց Նեստորին: Փաստորեն, Նեստորը հայտնվեց կրկնակի փակուդու առջև: Մի կողմից, նա տասն օրվա ընթացքում պետք է հրաժարվեր իր հայացքներից, որը նշանակում էր, որ նա ընդունում էր նաև Կյուրեղի բանադրանքները: Սակայն Նեստորի հաստատակամությունը իմանալով հանդերձ՝ թույլ կտանք մեզ ենթադրելու, որ ամեն դեպքում Նեստորը չէր համաձայնելու ոչ պապական և առավել ևս ոչ էլ ալեքսանդրիական ժողովի որոշումների հետ: Այս տեսանկյունից բավականին ճիշտ դիտարկում է անում Ա. Նյումանը, որը գրում է, թե «Երբ Կյուրեղն իր տասներկու նգովքներն ուղարկեց Նեստորին, Կյուրեղի ու Նեստորի դաշտից հակամարտությունը տեղափոխվեց այլ դաշտ: Այժմ հակամարտությու-

<sup>25</sup> Տե՛ս *Celestine*, Ep. XIII / *Stevenson J.* Creeds Councils and Controversies, p. 279-280.

<sup>26</sup> Տե՛ս *Kidd B. J.* A History of the Church to A.D. 461, vol. III, p. 224.

<sup>27</sup> Տե՛ս *Duchesne M. L.* The Early History of the Christian Church, vol. III, p. 236.

<sup>28</sup> Տե՛ս *Cyril*, Ep., XVII (Կյուրեղի երրորդ նամակը Նեստորին), *Patrologia Graeca* (ed. by J.-P. Migne). T. LXXVII, col. 105-122.

<sup>29</sup> Բանադրանքների վերլուծության մանրամասները տե՛ս *Bettenson H.* Documents of the Christian Church. London, 1967, p. 46-47.

նը վերածվեց կոնֆլիկտի անտիռքացիների ու ալեքսանդրիացիների միջև»<sup>30</sup>:

Շարունակելով իր գաղափարների քարոզությունը՝ Նեստորը դրանք ևս մեկ անգամ հրապարակավ արտահայտեց 430 թ. դեկտեմբերի 13-ին և 14-ին: Իր հրապարակային ելույթներում նա հերթական անգամ մերժեց «Աստվածածին» եզրի հերետիկոսական, այն է՝ ապոլինարական կամ արիոսական նշանակությունը<sup>31</sup>: Միաժամանակ, ավելորդ չարաշահումներից խուսափելու նպատակով, նա առաջարկեց «Աստվածածին» եզրի փոխարեն շրջանառության մեջ դնել «Քրիստոսածին» եզրը: Այս պարագայում ակնհայտ դրսևորում ստացավ նաև Նեստորի և նրա գաղափարական դարբնոցի՝ Անտիռքի և անտիռքյան քրիստոսարանության կապը: Նեստորից ստանալով կյուրելյան տասներկու նգովըները՝ Անտիռքի Յովիաննես պատրիարքն, իրու ապոլինարական, դատապարտեց դրանք: Յովիաննես Անտիռքացու կարծիքին հետևեցին նաև Կապադովկիական Կեսարիայի Ֆիրմուս արքեպիսկոպոսը (431-438 թթ.)<sup>32</sup>, Անդրեաս Սամոսատցին (431-434 թթ.)<sup>33</sup> և Ժամանակի հայտնի Եկեղեցագետ և աստվածաբան Թեոդորետ Կյուրոսցին (393-458 թթ.)<sup>34</sup>:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ Կյուրեղ Ալեքսանդրացին ևս ծեռքը ծալած չէր նստել: Մի կողմից նա ակտիվորեն հակազդում էր իր քննադատներին, մասնավորապես Անդրեաս Սամոսատցուն (Apologia contra Orientales)<sup>35</sup> և Թեոդորետ Կյուրոսցուն (Apologia contra Theodoretum pro XII capitibus)<sup>36</sup>, իսկ մյուս կողմից ապարդյուն կերպով փորձում էր իր կողմը գրավել Ակակիոս Բերիացուն (379-437 թթ.)՝ իր հորեղբորը՝ Թեոդիլոս Ալեքսանդրացու մերձավորագույն աջակցին, որն այդ պարագայում պաշտպանում էր Նեստորի դիրքորոշումը:

431 թ. հունիսի 22-ին վիճաբանությունների ու նախաձեռնությունների արդյունքում Եփեսոս քաղաքում գումարվեց երրորդ տիեզերաժողովը, որի աշխատանքների բացմանը չին հասցրել ժամանալ անտիռյան և Յովմի պատվիրակները: Եվ քանի որ ժողովականները տասնվեց օր սպասել էին ուշացած մասնակցությունը բացել այս: Նեստորը հրաժարվեց մասնակցել ժողովի աշխատանքներին, որը, սակայն, արգելք չդարձավ նրան դատապարտելու համար: Եթե Նեստորի դատապարտության մասին լուրը տարածվեց Եփեսոսում՝

<sup>30</sup> Newman A. H. A Manual of Church History. Vol. I, Philadelphia, 1906, p. 340.

<sup>31</sup> Տե՛ս Loofs F. Nestoriana: Die Fragmente des Nestorius gesammelt, untersucht und herausgegeben, p. 298-313.

<sup>32</sup> Տե՛ս Patrologia Graeca (ed. by J.-P. Migne). T. LXXXIV, col. 579-581.

<sup>33</sup> Աստվածաբանի մոտեցումների մանրամասները տե՛ս Patrologia Graeca (ed. by J.-P. Migne). T. LXXVI, p. 315-386.

<sup>34</sup> Տե՛ս Kidd B. J. A History of the Church to A.D. 461, vol. III, p. 232-234. Յարկ ենք համարում նշել, որ Թեոդորետը անտիռքյան այն հավատամքի հեղինակն է, որը 433 թ. Եկեղեցական միության ժամանակ Կյուրեղ Ալեքսանդրացին ուղղադավան ճանաչեց:

<sup>35</sup> Այդ աշխատության մանրամասները տե՛ս Patrologia Graeca (ed. by J.-P. Migne). T. LXXVI, col. 315-386.

<sup>36</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 385-452:

որոշ մարդիկ փորձեցին բռնություն կիրառել Նեստորի նկատմամբ, որից հետո ստիպված էին պահապաններ կարգել նրա տան շուրջը<sup>37</sup>:

Ժողովի բացումից չորս կամ հինգ օր անց Եփեսոս հասան անտիռքացիները, որոնք, իրենց հերթին, 43 Եպիսկոպոսներով գումարեցին իրենց ժողովը և դատապարտեցին Կյուրեղի Ալեքսանդրացուն և Եփեսոսի Եպիսկոպոս Մեմնոնին: Դետաքրքրական է, որ ժողովի մասնակից անտիռքացիները ոչ թե պաշտպանեցին Նեստորին կամ նրա ուսմունքը, այլ՝ դատապարտեցին Կյուրեղի Ալեքսանդրացու «անօրինական գործողությունները»: Դովիաննես Անտիռքացու ժողովն իբրև «հերետիկոսական մտքի արգասիք» դատապարտեց նաև Կյուրեղի «Տասներկու նզովքները»<sup>38</sup>:

Փոխադարձ մեղադրանքներից ու բանադրանքներից հետո, բնականաբար, երկու կողմերն էլ իրենց ծշմարտացիությունն ապացուցելու կամ համոզելու նպատակով պետք է դիմեին կայսրին: Բայց կայսեր որոշումն անսպասելի էր բոլորի համար: Նա հրամայեց ծերբակալել Կյուրեղին, Մեմնոնին և Նեստորին և նրանք կալանքի վերցվեցին Եփեսոսում: Սակայն կարծ ժամանակ անց, անսալով հասարակական կարծիքին, կայսրն ազատ արձակեց Կյուրեղին և Մեմնոնին, իսկ Նեստորին «պատվո աքսոր» ուղարկեց իր մենաստան: 431 թ. հոկտեմբերի 25-ին Նեստորի փոխարեն Կ. Պոլսի պատրիարք դարձավ Մաքսիմիանոսը: Իսկ ժողովից երկու տարի անց Կ. Պոլսի պատրիարքության ակտիվ միջնորդությամբ և կայսեր հարկադրանքով 433 թ. «միավորնան գիր» ստորագրվեց Ալեքսանդրիայի և Անտիռքի միջև<sup>39</sup>: Դրանում Նեստորին դատապարտելու և իր բանադրանքները պահպանելու դիմաց Կյուրեղը համաձայնեց իր ստորագրությունը դնել անտիռքյան հավատքի սահմանման տակ:

Մի քանի տարի վաճռում փակված մնալուց հետո 435 թ. Նեստորն աքսորվեց Եգիպտոս, իսկ նրա գրքերը կայսեր հրամանով կրակին հանձնվեցին: Չնայած աքսորական կյանքի դաժան պայմաններին, Նեստորը դրանց մասին ոչինչ չի գրել, այլ միայն փորձել է «հիմնավորել» իր զաղափարական ծշմարտացիությունը: Նրա մահվան մասին տեղեկությունները բավականին աղքատիկ են, եթե չասենք, որ գրեթե բացակայում են: Միակ աղբյուրը, թերևս վերջին շրջանում հայունաբերված Նեստորին վերագրվող «Book of Heraclides» աշխատանքն է, որտեղ հիշատակված է նաև Եփեսոսի 449 թ. «ավագակային ժողովի» և Թեոդոս II կայսեր մահվան մասին<sup>40</sup>: Այդ հիմնա վրա էլ Եվգարիոս պատմիշը համոզված գրում է, որ Նեստորը Քաղկեդոնի ժողովից առաջ չի մահացել<sup>41</sup>: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ Նեստորին վերագրվող աշխատության մեջ Քաղկեդոնի վերաբերյալ ուղղակի ոչ մի հիշատակություն չկա:

<sup>37</sup> Տե՛ս **Nestorius**: The Bazaar of Heracleides (by Driver G.R. and Hodgson L. ). Oxford, 1925, p. 135: Տե՛ս նաև **Nau**. Le livre d'Heraclide de Damas. Paris, 1910, p. 120.

<sup>38</sup> Տե՛ս **Stevenson J.** Creeds Councils and Controversies, p. 289.

<sup>39</sup> Տե՛ս **Nestorius**: The Bazaar of Heracleides (by Driver G.R. and Hodgson L. ), p. 287ff. Տե՛ս նաև **Nau**. Le livre d'Heraclide de Damas, p. 254ff.

<sup>40</sup> Տե՛ս **Nestorius**: The Bazaar of Heracleides (by Driver G.R. and Hodgson L. ), p. 345f, 369, 375. Տե՛ս նաև **Nau**. Le livre d'Heraclide de Damas, p. 302f, 323, 327.

<sup>41</sup> Տե՛ս **BethuneBaker J. F.** Nestorius and his teaching: a fresh examination, p. 34.

Այս ամենով հանդերձ հարկ է նշել, որ Նեստորի և նրա ուսմունքի մասին մեր պատկերացումները թերի ու անավարտ կլինեին, եթե 1889 թ. Ուրմիայի Կոտչանես քաղաքի նեստորական պատրիարքության գրադարանում ամերիկացի միսիոներների կողմից շիայտնաբերվեր ու չպատճենահանվեր 12-րդ դարի մի ձեռագիր՝ մի շատ կարևոր աշխատություն՝ «Յերակլիդեսի բազար» վերնագրով<sup>42</sup>: Վերջին շրջանում աստվածաբանական բազմաթիվ կենտրոններում այդ աշխատությունը քննարկման լուրջ նյութ է դարձել, որի հիման վրա երկրորդ վերածունդն է ապրում Նեստորի գաղափարների հետազոտությունն ու անաշար գիտական արժենորումը:

Չնայած այդ ամենին՝ պետք է նշել, որ ընդհանրական եկեղեցու կողմից արդեն իր աքսորի շրջանում Նեստորին մոռացված մարդ էր: Իր մահից հետո ևս Նեստորն ու նրա ուսմունքը դարեր շարունակ անտեսված մնացին, բացառությամբ թերևս Պարսկաստանի և Չինաստանի, որտեղ նեստորական քարոզիչները 6-րդ դարից սկսած բավականին լայն գործունեություն ծավալելով՝ մեծաթիվ հետևորդներ էին ձեռք բերել:

## ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ НЕСТОРИЯ

*O. B. Оганисян*

В статье анализируется один из самых противоречивых вопросов церковной истории - жизнь и деятельность Константинопольского патриарха первой половины V века Нестория. В церковной истории Несторий представляется как "противоречивый человек", т.к. его христологическая концепция неоднократно была подвергнута анафеме.

Анализируя жизнь и деятельность Нестория на основе апокрифической работы "Базар Гераклита", автор обосновывает, что противоречия между христологией Нестория и христологическими концепциями Кирилла Александрийского и Келестина Римского имели не "личный характер", как считают отдельные исследователи, а принципиальный, т.к. учение Нестория невольно было направлено против церковной традиции.

<sup>42</sup> Զեռագրի ասորական բնագրի անվանումը «Thegourta Heraclides» է: Thegourta-ն հավանաբար հունարեն «pramateia» բառից է, որը «գործունեություն» իմաստից զատ ունի նաև «գիտական աշխատանք» (treatise) նշանակությունը: Եվ չնայած դրան, այս ձեռագիրը տարբեր լեզուներում գիտնականների կողմից տարրեր անվանումներով է ներկայացվում, ընդհուած մինչև «Յերակլիդեսի գործը» վերնագիրը: Դանդիպում են նաև «The Bazaar of Heraclides», «The Bazaar», «Treatise of Heraclides», «Book of Heraclides», «Liber Herclides» անվանումները: Նեստորին վերագրվող այս աշխատանքի մասին բավականին շատ է գրվել, այն մեկնաբանվել ու վերլուծվել է տարրեր տեսանկյուններից, սակայն մինչ օրս էլ հեղինակի վավերականության հետ կապված հարցադրումները լուծված չեն: Գիտնականները կասկածի տակ են առնում հատկապես աշխատանքի առաջին մասը և վերաբանը, որոնք ոչ մի պարագայում չեն կարող Նեստորի գոչին պատկանել:

## **THE LIFE AND ACTIVITY OF NESTORIUS**

***H. V. Hovhannisyan***

The article refers to one of the most contradictory issues within the Christian church history which is the life story of Nestorius. Nestorius himself is a challenging person within the church of the 5th century because it does not happen every day that Constantinople patriarch transforms to heretic and accused to exile.

The author analyzes the life and activities of Nestorius based on his work “Bazaar of Heraclides”. This book has been considered lost for long centuries and was recently found in the north of Iran. The author analyzes the controversy between Nestorius and Cyril from Alexandria and shows the details of accusation of Nestorius. This article reveals some details of the life and activity of Nestorius not known and not analyzed before.